

ԱՅՍ Գարաբազ օղլու Ասատուր բաւական նշանաւոր եղած է զանազան գործերու և տոհմային աշխատութեանց մէջ: Ծնած 1820ին՝ ի Պէյքոզ Վոսիորի գաւառացի հօրմէ ու առած ժամանակին համեմատ բաւական խնամեալ կրթութիւն մը՝ 1842ին պաշտօնեայ եղած է հարկահաւաք այն մեծ ընկերութեան մէջ, զոր կը բաղկացունէին Երկանեան Յարութիւն, Քիւրքճիխանլը Պետրոս, Միսաք ամիրայ, Ճէզայիրլի Մկրտիչ, Պաղտասար Չէրէզեան և Պօղոս Աշնանեան, Ճանիկ ամիրայ, Մաքսուտ ամիրայ, Յարութիւն Կէլկէլեան, Արբահամ Ալլահվէրաի, Յովհաննէս Թ՛ընկըր, Յովսէփ Տավուտեան:

Տէմիրճի Ասատուր՝ այդ հարկահաւաք ընկերութեան կողմէն զրկուած էր նախ Մուսուլ քահնիլի համար, և ապա հոն սկսած էր սեղանաւորութեան: 1845ին դարձաւ Կ. Պոլիս իր ծննդավայրը, ուր զբաղեցաւ երկաթի վաճառականութեամբ Ղալաղիա Գուրչունլը Մաղազան, որ հիմայ եղած է Կէօջէ օղլու խան: Իր ամուսնութեանէն (1850) քիչ ետքն՝ ընկերացաւ Սկիւտարցի Փափազեան Յարութիւն և Սիմէոն անձերուն հետ, ու 1854-56ի բարեբաղդ շրջանին ըրին մեծ շահեր: Ստեֆանոյ Բալի մեծ դրամատէրն ալ ընկերացաւ իրենց մեծ դրամազուխով, և սկսան միասին Թօփհանէյի և Թէրսհանէյի տալ